ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԱՐՄԵՆԱԿ ՈՍԿԱՆՅԱՆ

Հայերի մասսայական արտագաղթը հայրենիքից դեպի մերձակա ու հեռավոր երկրներ, ինչպես հայտնի է, սկսվել է դեռևս բյուզանդական գերիշխանության և սելջուկյան արշավանքների ժամանակներից, շարունակվել է հետագա դարերի ընթացքում և ահավոր չափերի հասել XIX դ. վերջերին ու XX դ. սկզբներին։ 1915—1920 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանը համարյա ամբողջովին դատարկվեց հայերից, որոնց մի մասը, մոտ մեկ և կես միլիոն մարդ, ֆիզիկապես ոչնչացվեց թուրք ջարդարարների կազմակերպած ցեղասպանության ընթացքում, իսկ մնացածները սփռվեցին աշխարհով մեկ։ Ըստ էության, հենց այդ եղեռնական տարիների արդյունքն է այսօրվա Հայկական սփյուռքը։

Տարբեր երկրներում ներկայումս բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ ստույգ տվյալներ, դժբախտաբար, չկան[1]*։ Արտասահմանյան պետությունների մեծագույն մասում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայերի թիվը չի ճշտվել պետական վիճակագրության կողմից։ Գրականության մեջ և սփյուռքահայ պարբերական մամուլում ժամանակ առ ժամանակ հրապարակվող թվական տվյալները մոտավոր են ու երբեմն էլ իրարամերժ։ Պակասավոր են նաև եկեղեցական մարմինների հաղորդած տվյալները, որոնք, որպես կանոն, չեն ընդգրկում քրիստոնեական տարբեր դավանանքների (կաթոլիկ, բողոքական, առաքելական) կամ տարբեր ենթակայության (էջմիածնական, անթիլիասական) պատկանող բոլոր հայերին։ Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս որոշակի (թեկուզ և թերի) գաղափար կազմելու սփյուռքահայության այսօրվա թվաքանակի մասին։*

Ըստ եղած տվյալների[2]*, 1984 թ. վերջին հայկական մեծ ու փոքր գաղթօջախներ կային աշխարհի 84 երկրներում, որոնցից 26-ը՝ Եվրոպայում, 26-ը՝ Ասիայում, 20-ը՝ Աֆրիկայում, 10-ը՝ Ամերիկայում և 2-ը Ավստրալիայում*

---

[1] *Կիսապաշտոնական տեղեկություններ կան Եվրոպայի սոցիալիստական մի քանի պետություններում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Կանադայում ապրող հայերի թվաքանակի մասին։ Մի շարք երկրների պաշտոնական տվյալները հայերի քանակի մասին (Թուրքիա, Իրան) պարզապես կեղծ են և պակասեցված։*

[2] *Օգտագործված են 1980—1984 թթ. վերաբերող հետևյալ աղբյուրները. 1) սովետահայ պարբերական մամուլ («Սովետական Հայաստան», «Коммунист», «Հայրենիքի ձայն» թերթեր, «Պատմա-բանասիրական հանդես», «Սովետական Հայաստան», «Էջմիածին» հանդեսներ), 2) սփյուռքահայ մամուլ (մասնավորապես «Ջարթոնք», «Ազատ օր», «Sardarapat», «Արարատ», «Ալիք», «Աշխարհ», «Հորիզոն», «Աբե», «Երևան», «Շարժում» թերթերը, 3) „International Herald Tribune", „La Monde" թերթերի և "The Economist" անգլիական շաբաթաթերթի առանձին համարներ, 4) «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6—10, 5) 1980—1984 թթ. հրատարակված առանձին աշխատություններ (օրինակ, Վ. Համազասպյան, Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Երևան, 1980,* С. И. Брук, Население мира, М., 1980; Г. А. Шпажников, Религии стран Юго-Восточной Азии, М., 1980; *Նույնի՝* Религии стран Западной Азии, М., 1976; "Народонаселение мира", М., 1984 *և այլն), 6) 1981 թ. նոյեմբերին Երևանում կայացած համաժողովի մի շարք սփյուռքահայ մասնակիցների մեջ հաղորդած տվյալները, 7) Սփյուռքահայության հետ մշակութային կապի հանրապետական կոմիտեի տվյալները, 8)* „Советский энциклопедический словарь", М, 1985 (таблица: „Народы мира, насчитывающие свыше 1 млн. чел.").

ու Օվկիանիայում։ Այդ տվյալներով սփյուռքահայության ընդհանուր քանակը 1984 թ. վերջին կազմում էր մոտ 2 միլիոն 225.000 մարդ։ Հիշված 84 երկրներից 38-ում հայերի թիվը 100-ական մարդուց չի անցնում։ Այդ երկրներն են՝ Ալժիր, Աֆղանստան, Բանգլադեշ, Բիրմա, Գանա, ԳԴՀ, Դանիա, Եմենի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Զաիր, Զիմբաբվե, Թունիս, Ինդոնեզիա, Լիբերիա, Լիբիա, Լյուքսեմբուրգ, Կոլումբիա, Կոնգո, Կուբա, Հարավային Կորեա, Հարավսլավիա, Հոնկոնգ, Ճապոնիա, Մադագասկար, Մալթա, Մոնակո, Նիգերիա, Չադ, Չեխոսլովակիա, Չինաստան, Պորտուգալիա, Չիբուտի, Սինգապուր, Սիերա-Լեոնե, Տաիլանդ, Տայվան, Փղոսկրի ափ, Քենիա, Ֆիլիպիններ։ Որոշակի թիվ հայտնի չէ 2 երկրներում բնակվող հայերի քանակի մասին (Նորվեգիա և Ֆինլանդիա)։ Տասներկու երկրներում հայկական համայնքն ընդգրկում է 100-ից մինչև 1.000-ական մարդ։ Այդ երկրներն են՝ Ալբանիա, Եթովպիա, Երուսաղեմ, Իսպանիա, Լեհաստան, Հնդկաստան, Հունգարիա, Մարոկկո, Մեքսիկա, Նոր Զելանդիա, Չիլի և Սուդան։ 1000-ից մինչև 10.000-ական անդամ ունեն հետևյալ 14 երկրների հայկական համայնքները. Ավստրիա, Արաբական Միացյալ Ամիրայություններ, Բելգիա, ԳՖՀ, Իսրայել, Իտալիա, Կիպրոս, Հոլանդիա, Հորդանան, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա, Սաուդյան Արաբիա և Վենեսուելա։ 10-ից մինչև 20 հազար հայեր են ապրում 7 երկրներում։ Դրանք են՝ Անգլիան, Բրազիլիան, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունը, Իրաքը, Հունաստանը, Ուրուգվայը և Քուվեյթը։ Երեք երկրներում (Ավստրալիա, Բուլղարիա և Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն) հայկական համայնքն իր կազմում հաշվում է 20-ից մինչև 50 հազար մարդ, իսկ 8 երկրներում (ԱՄՆ, Արգենտինա, Թուրքիա, Իրան, Լիբանան, Կանադա, Սիրիա և Ֆրանսիա)՝ 50 հազարից ավելի։ Վերջին 11 երկրներում ապրում է այսօրվա սփյուռքահայության մոտ 92%-ը (2 միլիոն 45 հազար մարդ)։

Ստորև տալիս ենք սփյուռքահայության մոտավոր, առավել հավանական և վստահելի թիվը 1984 թ. վերջերին՝ ըստ մայրցամաքների և երկրների։

1. Եվրոպա

1. Ալբանիա	180	14. Հոլանդիա	3.000
2. Անգլիա	17.000	15. Հունաստան	15.000
3. Ավստրիա	4.000	16. Հունգարիա	1.000[4]
4. Բելգիա	5.000	17. Մալթա	10
5. Բուլղարիա	25.000	18. Մոնակո	50
6. ԳԴՀ	40	19. Նորվեգիա	?
7. ԳՖՀ	10.000	20. Շվեդիա	3.000
8. Դանիա	100	21. Շվեյցարիա	3.000
9. Իսպանիա	500	22. Չեխոսլովակիա	50
10. Իտալիա	2.000	23. Պորտուգալիա	20
11. Լեհաստան	1.000[3]	24. Ռումինիա	6.000
12. Լյուքսեմբուրգ	15	25. Ֆինլանդիա	?
13. Հարավսլավիա	50	26. Ֆրանսիա	350.000

ընդամենը՝ 446.015

---

3 «Սովետական Հայաստան» ամսագրի 1984 թ. № 2-ում (էջ 30) զետեղված «Լեհահայերի զարգացումն այսօր» հոդվածում ասված է, որ ներկայումս Լեհաստանում ապրում են նաև «հայկական ծագումի» 10.000 լեհեր։

4 «Հայկական սովետական հանրագիտարանի» 6-րդ հատորում զետեղված «Հունգարիա» հոդվածում ասված է. «1970 թ. Հունգարիայում բնակվում էր հայկական ծագումով շուրջ 8.000 մարդ» (էջ 678)։

2. Ասիա

27. Արաբական Միացյալ Ամիրայություններ . . . 5.000
28. Աֆղանստան . փոքրաթիվ[5]
29. Բանգլադեշ . . 100[6]
30. Բիրմա 10
31. Եմենի Ժող դեմ. Հանրապետություն. 10
32. Երուսաղեմ . . . 600
33. Թուրքիա . . . 65.000[7]
34. Ինդոնեզիա . . . 100[8]
35. Իսրայել 2000
36. Իրան 220.000
37. Իրաք 20.000
38. Լիբանան . . . .250.000[9]
39. Կիպրոս . . . . . 4.000[10]
40. Հարավային Կորեա . 4
41. Հնդկաստան . . . 1.000
42. Հոնկոնգ 50
43. Հորդանան . . . 4.000
44. Ճապոնիա 100
45. Չինաստան . . . 100[11]
46. Սաուդյան Արաբիա 8.000
47. Սինգապուր . . . 1.000
48. Սիրիա 120.000
49. Տաիլանդ . . 2 ընտանիք[12]
50. Տայվան 30
51. Քուվեյթ 11.000
52. Ֆիլիպիններ . . . 100

ընդամենը՝ 712.204

3. Աֆրիկա

53. Ալժիր 20
54. Գանա 10
55. Եգիպտոս 12.000
56. Եթովպիա 1.000
57. Զաիր 100
58. Զիմբաբվե . . . 100
59. Թունիս . . . 25
60. Լիբերիա . . փոքրաթիվ[13]
61. Լիբիա 100
62. Կոնգո 100
63. ՀԱՀ . . . . . .30.000[14]
64. Մադագասկար . . . 60
65. Մարոկկո 200
66. Նիգերիա 10
67. Զադ 10
68 Զիբուտի 100
69. Սիերա-Լեոնե . . . 10
70. Սուդան 1.000
71. Փղոսկրի ափ . . . 30
72. Քենիա 10

ընդամենը՝ 44.885

---

5 1976 թ. տվյալներով։

6 1980 թ. տվյալներով։

7 Թուրքիայում ներկայումս ապրում են ավելի քան 1 միլիոն հայեր, որոնք բռնի կամ կամավոր դավանափոխ են եղել և կամ ստիպված են թաքցնել իրենց ազգությունը («Ալիք», 18. XII. 1980)։

8 1980 թ. տվյալներով։

9 Հնարավոր է, որ 1980 թ. սկսած աղբյուրներում ցույց տրվող այս թիվը որոշակի փոփոխություններ է ենթարկվել իսրայելական ագրեսիայի ընթացքում։

10 «Հայրենիքի ձայն» թերթի 1984 թ. հուլիսի 25-ի համարում տպագրված մի հոդվածում կիպրահայերի թիվը ցույց է տրված 2.000։ Դա թյուրիմացություն է, այդքան հայեր են ապրում միայն Նիկոզիա և Լառնակա քաղաքներում։

11 1983 թ. տվյալներով։

12 1981 թ. տվյալներով։

13 1980 թ. տվյալներով։

14 «Հայկական սովետական հանրագիտարանի» 6-րդ հատորի «Հայեր» հոդվածում ցույց տրված այս թիվն այնքան էլ վստահելի չէ։

4. Ամերիկա

73. ԱՄՆ	800.000[15]	78. Կուբա	100
74. Արգենտինա	85.000	79. Մեքսիկա	400
75. Բրազիլիա	20.000	80. Չիլի	300[18]
76. Կանադա	70.000[16]	81. Վենեսուելա	1.600
77. Կոլումբիա	փոքրաթիվ[17]	82. Ուրուգվայ	14.000
			ընդամենը 991.400

5. Ավստրալիա և Օվկիանիա

83. Ավստրալիա	30.000	84. Նոր Զելանդիա	500
			ընդամենը՝ 30.500

Ամբողջ սփյուռքը՝ 2.225.004

Արտասահմանյան մի շարք երկրներում ապրող հայերի թվաքանակի վերաբերյալ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Փարիզի «Մոնդ» թերթի 1983 թ. հուլիսի 21-ի համարում տպագրված «Հայկական սփյուռքը» հոդվածում հիշատակված հետևյալ տվյալները, որ բերում ենք համեմատության համար.

Կանադա	100.000	Հունաստան	16.000
ԱՄՆ	500—600.000	Շվեյցարիա և Բելգիա	2.500
Արգենտինա, Բրազիլիա և Ուրուգվայ	50.000	Նորվեգիա, Շվեդիա և Ֆինլանդիա	10.000
Ավստրալիա և Նոր Զելանդիա	15.000	Եգիպտոս	20.000
Ֆրանսիա	350.000	Լիբանան	200.000
ԳՖՀ	10.000	Սիրիա	100.000
Անգլիա	10.000	Թուրքիա	60.000
Իտալիա	2.000	Իրան	150.000
		Քուվեյթ	12.000

Հայկական սփյուռքը խիստ դինամիկ, հարափոփոխ ամբողջություն է, որի առանձին մասերը աշխարհի տարբեր երկրներում կատարվող ռազմական անցուդարձերի և քաղաքական, սոցիալ-տնտեսական ու էթնիկական պրոցեսների հետևանքով վերջին տասնամյակների ընթացքում ենթարկվել են զգալի փոփո-

---

15 ԱՄՆ-ի կոնգրեսի պատգամավորների խմբի ղեկավարը Երևանում կազմակերպված հարցազրույցի ժամանակ ավել է այլ թիվ՝ 600.000 (տե՛ս «Սովետական Հայաստան» և «Коммунист» օրաթերթերի 1983 թ. հուլիսի 12-ի համարները)։

16 Մոնրեալում հրատարակվող «Հորիզոն» թերթի 1983 թ. մայիսի 19-ի համարում ասված է, որ նույն տարվա ապրիլի 26-ին Օտտավայում հրատարակված «1981 Census of Canada» աշխատության մեջ բերված տեղեկությունների համաձայն Կանադայում «իրենց հայ են ճանաչում» 21.155 մարդ։ Եթե այդ տեղեկությունը ճիշտ է, ապա այն, ամենայն հավանականությամբ, հայերի նկատմամբ իրականացվող խտրականության արդյունքներից է։

17 1978 թ. տվյալներով։

18 1967 թ. տվյալներով Չիլիում ապրող հայերի թիվը եղել է 4.000 մարդ («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1), իսկ 1983 թ. տվյալներով՝ 1.200 մարդ («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 9, էջ 23)։ Չիլիաբնակ հայերի թվի այս խիստ նվազեցումը (4000-ից մինչև 300), անկասկած, երկրում իշխող ռազմաֆաշիստական ռեժիմի հետևանքն է։

խությունների։ Նկատվող ընդհանուր տենդենցն այն է, որ, մի կողմից, ավելի ու ավելի սակավամարդ են դառնում Մերձավոր ու Միջին արևելքի հայկական հին գաղթօջախները, իսկ մյուս կողմից այլ երկրներում ստեղծվում են նորերը կամ զգալիորեն մեծանում է ուրիշ երկրների հայ բնակչության թիվը։ Մեր օրերում ևս շարունակվող այդ բարդ պրոցեսների պատճառների, ընթացքի և հետևանքների լուսաբանումը պահանջում է առանձին ուսումնասիրություն, որի ընթացքում անպայման պետք է հաշվի առնվեն նաև իսառը ամուսնությունների կամ այլ գործոնների հետևանքով կատարվող ձուլման պրոցեսները։

ЧИСЛЕННОСТЬ АРМЯН ЗА РУБЕЖОМ

АРМЕНАК ВОСКАНЯН

Резюме

Современная армянская диаспора является результатом геноцида армян в Турции в 1915 г., в ходе которого по прямому указанию турецких властей было истреблено около 1,5 млн. человек, а оставшиеся в живых вынуждены были эмигрировать в другие страны.

Из-за отсутствия точных статистических данных (а также постоянных передвижений армянского населения) невозможно с должной достоверностью установить количество армян в различных зарубежных странах, тем более, что появляющиеся в советской и зарубежной литературе и периодической печати сведения о численности армян в тех или иных странах, как правило, значительно отличаются друг от друга. Тем не менее, сравнительный анализ имеющихся данных позволяет установить, что к концу 1984 г. зарубежные армяне жили в 84 странах, а их общая численность составляла около 2 млн. 225 тыс. человек, в том числе: в Европе—около 446 тыс., в Азии—около 712 тыс., в Африке—около 45 тыс., в Америке—около 991 тыс. и в Австралии и Океании—около 30 тыс. человек, причем в 11 странах (США, Австралия, Болгария, Аргентина, Турция, Иран, Франция, Ливан, Канада, Сирия и ЮАР) проживает почти 92% всех зарубежных армян.